

տել եւ գիշերայն բանտէն փախչիլ: Հեռու դաշտի մը մէջ քիւրտ հովիւներու յարեցաւ, որոնք իրեն զգեստները կողոպտեցին: Յետոյ կաթուղիկոսին կողմանէ երկու ձիաւոր հասան զինք բռնեցին, չարչարելով Էջմիածին բերին. կաթուղիկոսը հաւատոյ դաւանութիւն պահանջեց, որպէս զի արձակէ. Սարգիս առանց իւր դաւանութեանը վնասելու՝ տուաւ գրաւոր դաւանութիւն մը որ ընդունելի չեղաւ: Գրուածքն այրեցին եւ զինք շղթայակապ բանտարկեցին, ուր մնաց ամբողջ ձմեռը, մինչեւ հիւանդացաւ: Շրջթաներն արձակեցին, առանձին խուց եւ դիւրութիւններ տուին, որով Սարգիս ասդին անդին նամակներ ղրկեց: Այս Էջմիածին գրուած նամակներէն երկուքը (21 Յունիս հ. տ. 1788 եւ 15 Յուլիս հ. տ. 1790) գրուած են ի Հռոմ առ Չեռնադրիչ Արքեպ. Ստեփ. Աթանտիլեան, որ ժամանակաւ նոյն նեղութիւնները կրած էր յԷջմիածին: Այս նամակներով Սարգիս փրփականտայէն եւ Ս. Քահանայապետէն կը խնդրէ, որ հաճին զինք ազատել: Էջմիածնի եպիսկոպոսներն իմացան եւ զինք Սեւանայ վանքն ուքսորեցին, ուր վերջին աստիճանի տառապանքներ կրեց վանկաններէն: Այստեղ մնաց երեք տարի եւ երեք ամիս: Նոյն միջոցին նամակներն իրենց տեղն հասնելով՝ Երեւանի խանէն եւ ազգեցիկ իշխանութիւններէն թուղթ եկաւ կաթուղիկոսին որ Սարգիսն արձակէ: Կաթուղիկոսը զինք Էջմիածին բերել տուաւ, ուր քանի մ'ամիս թեթեւ բանտարկուեցաւ, եւ վերջապէս Հերակլ թագաւո-